



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ՝ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀՐԱԿԻՐԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՆ

Կիրակի, 4 Հոկտեմբերի երեկոյեան, «Պեվըրլի Հիլթըն» Պանդոկին մէջ, փակ դռներու ետին, Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Տիար Սերժ Սարգսեան, հանդիպում մը ունեցաւ Արեւմտեան Ամերիկայի հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ: Սոյն հանդիպումին ներկայ գտնուեցաւ նաեւ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Սարտիրոսեան, եւ յանուն մեր Թեմի ժողովականութեան ու ժողովուրդին՝ իր մտահոգութիւններն ու մտածումները փոխանցեց մեծարգոյ Նախագահին:

Սրբազան Հայրը նշեց, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ Նախաստորագրուած համաձայնագիրները արդարօրէն մտահոգութեան ալիքներ բարձրացուցած են հայութեան մէջ, Հայաստանի եւ Սփիւռքի զաւակներուն մօտ. հասարակաց մտահոգութիւնը սպասելի էր, որովհետեւ խնդրոյ առարկայ են համահայկական հիմնահարցեր, ինչպէս՝ Ցեղասպանութիւնը, Արեւմտեան Հայաստանի մեր իրաւատիրութիւնը, Արցախի գոյավիճակը եւ յարակից հարցեր:

Սրբազան Հայրը Հայաստանի Նախագահին ուղղած իր խօսքը այսպէ՛ս աւարտեց.

«Սիրելի Պրն. Նախագահ,

«Մեր ակնկալութիւնն է, որ Ձեր այցելութեան աւարտին, Սփիւռքի հայութեան մտահոգութիւններն ու տեսակետները լսելէ ետք, մեր Նահատակներու Կտակի հաւատարմութեամբ, Նախքան «ոեւէ համաձայնագրի ստորագրութիւնը», յանդորրութիւն մտաց՝ սրտբաց կոչ ուղղէք մեր ժողովուրդին, ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի, փարատելու համար ոեւէ մտահոգութիւն, հաւաստիացնելով եւ խոստանալով՝ որ **Ցեղասպանութեան ճանաչումը, մեր արդար իրաւունքներու պահանջատիրութիւնը եւ Արցախի իրաւովիճակը անսակարկելի են**, եւ Վարդանանց ոգիով շեշտեք, որ «Այս սկզբունքներէն եւ իրաւունքներէն ոչ ոք կրնայ խախտել մեզ կամ հեռացնել»:

PRELATE PARTICIPATES IN CLOSED DOOR MEETING WITH PRESIDENT SERZH SARGSYAN

On Sunday, October 4th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, participated in a closed door meeting between the President of Armenia His Excellency Serzh Sargsyan and representatives from community organizations at the Beverly Hilton Hotel.

During the meeting, the Prelate voiced the community's objection to the protocols, noting that they have caused great concern among Armenians in Armenia and in the Diaspora for justifiable reasons. The Prelate concluded with the following:

“Dear Mr. President,

It is our expectation that after hearing the viewpoints and concerns of the Diaspora and before signing the protocols, you will address the citizens of Armenia, Artsakh, and the Diaspora, and alleviate our concerns by assuring us that recognition of the Genocide, our rightful demands, and the self-determination of Artsakh are non-negotiable issues.”

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԱՆՁԱՄԲ Կ՛ՕՐՅԷ ՀԱՅԱԴՈՒԼԻ ԴԻՄԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ

Հայ-թրքական արձանագրութիւններուն դէմ բողոքի արտայայտութիւններուն շարքին է տակաւին շարունակուող երիտասարդական չորսօրեայ հացադուլը, որ տեղի կ'ունենայ 6-9 Հոկտեմբերին, Հայաստանի Հիւպատոսարանին առջեւ, Կլենտոյլ:



Հացադուլի միջոցով երիտասարդութիւնը իր բողոքի ձայնը կը միացնէ հայ-թրքական արձանագրութիւններուն դէմ բարձրացած համընդհանուր կոչերուն:

Ուրբաթ, 9 Հոկտեմբերի կեսօրին, թեմիս

բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան անձամբ այցելեց հացադուլի դիմած հայ երիտասարդներուն, քաջալերելով գնահատեց անոնց ազգային ոգին, բարձր գիտակցութիւնն ու յանձնառութիւնը՝ Հայ Դատի արդար լուծման: Ապա Սրբազանը օրհնեց

զանոնք եւ աղօթագիրքեր ու հայկական խաչեր բաժնեց անոնց: Սրբազան Զօր կ'ընկերանային Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան եւ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Տեմիրճեան: Ներկաները միասին երգեցին «Զայր Մեր» աղօթքը, ինչպէս նաեւ «Մեր Զայրենիք» հիմներգը:

Յայտնենք, որ Երկուշաբթի, 5 Յոկտեմբերի կեսգիշերին, հացադուլի առաջին պահուն, յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան ներկայ գտնուեցաւ մոմավառութեան արարողութեան եւ հացադուլի մասնակիցներուն փոխանցեց Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութեան եւ քաջալերանքի խօսքը:

PRELATE CONVEYS HIS BLESSINGS TO AYF HUNGER STRIKERS

In opposition to the Turkey-Armenia protocols, members of the Armenian Youth Federation are holding a four-day hunger strike in front of the Consulate General of Armenia in Glendale.



The hunger strike began at midnight on Monday, October 6th, with a candle light vigil and will end at midnight on Friday the 9th. Rev. Fr. Vazken Atmajian was at the site of the hunger strike on Monday night to convey the Prelate's blessings to the youth.

On the afternoon of Friday, October 9th, H.E. Archbishop Moushegh Mardirossian visited the hunger strikers to convey his blessings and encouragement, and presented them with prayers and Armenian crosses. The collective singing of the Lord's Prayer and the Armenian National Anthem also took place.

Accompanying the Prelate were Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, and Rev. Fathers Vazken Atmajian and Ardak Demirjian.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ «ԱՍՊԱՐԷԶ»Ի
ԵՐԿՐՈՐԴ ԶԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ԲԱՑՄԱՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ**

Կիրակի, 11 Յոկտեմբերի երեկոյեան, «Ասպարեզ» օրաթերթի կեանքին երկրորդ դարու սկիզբը նշող ձեռնարկ մը տեղի պիտի ունենայ Մոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ, ներկայութեամբ նախկին եւ այժմու խմբագիրներուն, աշխատակիցներու եւ օրաթերթի բարերարներու ու բարեկամներու:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու քաջալերանքի խօսքը: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանայ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան: Ներկայ պիտի ըլլան Ազգային Վարչութեան անդամներ:

**PRELATE TO ATTEND CENTENNIAL BANQUET
OF ASBAREZ DAILY NEWSPAPER**

On Sunday, October 11th, 2009, the centennial banquet of Asbarez Newspaper will take place at “Bagramian” Hall in Montebello with the participation of former editors, contributors, staff, sponsors and friends.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will attend the banquet and convey his blessings and well wishes. Very Rev. Fr. Barthev Gulumian will accompany the Prelate. Executive Council members will also attend.

**ԱՐԵՎԵԼԵԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ
ՅԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՍՐՔՈՑ ՆԱԶԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու՝ Ղրպտի Ուղղափառ, Ասորի Ուղղափառ եւ Զայց. Առաքելական եկեղեցիներու Արեւմտեան Միացեալ Նահանգներու Առաջնորդները Երեքշաբթի, 6 Յոկտեմբեր 2009-ի առաւօտուն, ունեցան իրենց հերթական հանդիպումը, օրակարգի վրայ ունենալով միացեալ ծրագիրներ ու գործակցութեան նախագիծեր:

Հանդիպումը տեղի ունեցաւ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցոյ մէջ, հիւրընկալութեամբ Արեւմտեան Թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր:

Ժողովական աշխատանքներու սկսելէ առաջ, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ղրպտի Ուղղափառ համայնքի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սերաբիոն Եպիսկոպոս, եւ Ասորի Ուղղափառ համայնքի Առաջնորդ Գերշ. Տ. Եուճին Քափլան Արքեպիսկոպոս, եւ հոգեւորականները միացեալ աղօթքի պահ մը ունեցան, իւրաքանչիւրը երգելով ու աղօթելով իր լեզուով:

Առաջնորդ Սրբազան Զօր կողքին էին Զրիստոնեական Դաստիարակութեան Գրասենեակի զոյգ վարիչներ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ.

Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան, եւ Սրբոց
Նահատակաց Եկեղեցւոյ հովիւ՝ Արժ. Տ. Ռազմիկ Զինյ. Խաչատուրեան:



Ժողովը սկսել է առաջ,
Առաջնորդ Սրբազան Հօր
առաջնորդութեամբ,
հիւրերը այցելեցին Ազգ.
Ֆերահեան Վարժարանը,
ապա հանդիպում մը
ունեցան Վարժարանի
տնօրէն՝ Տիար Ժան
Գոսաքեանի հետ, որ
ընդհանուր գիծերու մէջ
ժողովականներուն
ծանօթացուց Ամերիկայի
տարածքին առաջին
Երկրորդական այս
Վարժարանի ծնունդին ու

ձեռք բերած յաջողութեանց մասին:

Ժողովը սկսաւ աղօթքով: Ապա ժողովականները գեկուցում լսեցին
յառաջիկայ Նոյեմբերի 21-ին, երեք եկեղեցիներու միջ-համայնքային
Կիրակնօրեայ Վարժարաններու միօրեայ հաւաքի նախապատրաստական
աշխատանքներու մասին, զոր ներկայացուց՝ Հայր Միւռն: Միօրեայ
հաւաքը տեղի պիտի ունենայ Ասորիներու Ս. Եփրեմ Առաջնորդարանիստ
Մայր Տաճարին մէջ, Պըրպէք, եւ կը վայելէ խորհուրդի անդամ երեք
եկեղեցիներու թեմակալ Առաջնորդներու հովանաւորութիւնը: Նաեւ
գեկուցուեցաւ երիտասարդական միացեալ աշխատանքներու ապագայ
ծրագրի մասին: Ժողովը որոշեց յաւելեալ մղում տալ երիտասարդական
խմբակներու գործունէութեան:

Ժողովը արժեւորեց նաեւ Սեպտեմբեր 24-ին տեղի ունեցած
համատեղ Ս. Պատարագը, որ տեղի ունեցաւ Ղըպտի Եկեղեցւոյ
հիւրընկալութեամբ, Նորթիտճի Ս. Մարիամ եւ Ս. Աթանասիոս Եկեղեցւոյ
մէջ:

Ժողովական աշխատանքներու աւարտին տեղի ունեցաւ սիրոյ
սեղան:

WESTERN PRELACY HOSTS MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS

On the morning of Tuesday, October 6th, 2009, the Council of Oriental
Orthodox Bishops met to discuss and draft future collaborative endeavors. The
meeting took place at Holy Martyrs Church in Encino hosted by H.E. Archbishop
Moushegh Mardirossian, Prelate.

The day began with a joint prayer led by the Prelate, H.E. Archbishop
Mor Clemis Eugene Kaplan, head of the Syriac Church, and H.G. Bishop
Serapion, head of the Coptic Church, in which clergy from each of the churches
also participated.

Joining the Prelate at the meeting were Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, as well pastor of Holy Martyrs Church Rev. Fr. Razmig Khatchadourian.



Prior to the start of the meeting, the Council had a chance to visit Ferrahian High School where they met with Principal Mr. John Kossakian, who gave a brief history of the school.

The official meeting started with the Prelate's opening prayer, after which Fr. Muron gave a report on the preparations taking place for the annual Oriental Orthodox Sunday School gathering which will be taking

place on November 21st at St. Ephraim Syriac Orthodox Cathedral under the auspices of the Council of Oriental Orthodox Bishops. The future endeavors of the OOC youth group were also discussed, and an evaluation of the joint Divine Liturgy which was celebrated on September 24th at St. Mary and St. Athanasius Coptic Church took place.

The guests were hosted to lunch following the meeting.

ԹԵՄԻՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՅՉԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Սարտիրոսեանի նախագահութեամբ ու ներկայութեամբ եւ Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Մարմինի



Նախաձեռնութեամբ, 2009-2010 ուսումնական տարեշրջանի եւ վերամուտի առթիւ, Շաբաթ, Հոկտեմբեր 3-ին, միօրեայ լսարան-հաւաք մը տեղի ունեցաւ Կիրակնօրեայ վարժարաններու տեսուչներուն եւ ուսուցիչներուն համար, Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տեր

Ղազարեան» սրահին մէջ:

Համագումարին կը մասնակցեին շուրջ քառասուն ուսուցիչ- ուսուցչուհիներ, կրօնական դաստիարակութեան գրասենեակի վարիչներ՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Յոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ս. Խաչ Մայր Տաճարի Յոգեւոր Յովիներ Արժ. Տ. Նարեկ Բիւյ. Փեհիվանեան եւ Արժ. Տ. Աշոտ Բիւյ. Գամպուրեան:

Հաւաքական կարճ աղօթքէ եւ Կիրակնօրեայի մաղթանք քայլերգէ ետք, Վարիչ Մարմնի ատենապետ Տիար Յակոբ Զաղացպանեան կատարեց բացման խօսքը: Լսարան-հաւաքի աշխատանքներու վարիչ՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան կատարեց հոգեւոր խորհրդածութիւն, ապա ներկայացուց Կիրակնօրեայ Դպրոցներու աշխատանքներու տարեկան ծրագիրը: Արժ. Տ. Նարեկ Բիւյ. եւ Արժ. Տ. Աշոտ քահանայ հայրերը ամփոփ գիծերու մէջ ներկայացուցին Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի Տիեզերական ժողովներու պատմական ու ժամանակագրական դէպքերու հոլովոյթը:

Տիկ. Նուարդ Մաթինեան, խօսեցաւ կիրակնօրեայ դպրոցներուն վստահուած մանուկներու հոգեւոր աճման նպաստող դերին մասին: Տիար Ռաֆֆի Թորոսեան, տասը ամփոփ եւ հետաքրքրական կէտերու մէջ ներկայացուց աստուածաշնչական դէմքերու, դէպքերու եւ ուսուցումներու ուղղափառ եւ գործնական մեթոտները: Իսկ Տիկ. Սեդա Բէչէճեան, խօսեցաւ սաղմոս, աղօթք թէ ոսկեղէն համարներ, աշակերտութեան բացատրելու, սիրցնելու եւ դիւրաւ ուսուցանելու հետաքրքիր ոճերու եւ մեթոտներու մասին:

Հայր Պարթեւ բացատրեց եւ ներկայացուց շարականներու փոխանցած դաստիարակչական հոգեւոր դերակատարութիւնն ու ձգած ազդեցութիւնը մանուկներու ներաշխարհին վրայ, շեշտելով որ երգը մեր ներաշխարհի ապրումներուն, յոյզերուն եւ զգացումներուն, ինչպէս նաեւ պատմական դէպքեր եւ պատումներ նկարագրելու եւ ներկայացնելու կենդանի, հաղորդական ու անմիջական դրսեւորում է:

Բարոյալից պատմութիւններու, աւետարանական հրաշքներու, դէպքերու եւ դէմքերու խտասալիկ-տեսաերիզներ օգտագործելու, ինչպէս նաեւ կրօնական բնոյթի համացանցի թէքնիք գործածութեան, վարժութեան եւ մեթոտներու մասին զեկուցեց Տիար Պերճ Ճամճեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատական եւ քաջալերական խօսքերով վեր առաւ դաստիարակչական բնոյթով կազմակերպուած նման հաւաքներու անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը, եւ այս առթիւ իր թելադրութիւններն ու բարեմաղթութիւնները ըրաւ՝ ըլլալու ծառայասեր, նուիրուելու աղօթանուէր կեանքի, բարիք գործելու ու սփռելու եւ առաքինութեան գործերու նախանձախնդիր ըլլալու:

Խմբային նկարով եւ փակման աղօթքով՝ Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչաց միօրեայ հաւաքը վերջ գտաւ յետ միջօրեի ժամը 5-ին:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6-ին, Ազգային Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատրան մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ: Ս. Պատարագը մատուցանեց Արժ. Տ. Նարեկ Բիւյ. Փեհիվանեան:

SUNDAY SCHOOL SEMINAR HELD AT THE PRELACY

On Saturday, October 3rd, 2009, the first Sunday School seminar of the 2009-2010 school year was held at the Prelacy "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and organized by the Sunday Schools' Directorate. Participating in the conference were Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, pastors of Holy Cross Cathedral Rev. Fathers Nareg Pehlivanian and Ashod Kambourian, and over 40 directors and teachers.



Following the opening prayer, Chairman Mr. Hagop Tchagaspanian welcomed the participants and invited Fr. Muron to offer the day's spiritual meditation and to present the activities report for the new school year. A presentation on the Councils of Nicaea, Constantinople, and Ephesus followed by Rev. Fr. Nareg and Rev. Fr. Ashod, both of whom lauded the mission of our Sunday Schools and the importance of educating our youth on the foundations of our Apostolic faith.

Presentations were also given by Mrs. Nevart Madinian, Mr. Raffi Torossian, and Mrs. Seta Kejejian, focusing on the role of Sunday Schools and new teaching methods.

Fr. Barthev spoke on how hymns can be used as instructional tools, explaining that our hymns have not only spiritual but educational value as well, which teach us about Biblical events, miracles, saints, and morality.

A presentation by Mr. Berdj Djamdjian followed on how teachers can incorporate computer technology and interactive resources in their teachings, and a list of websites as well as a CD on Biblical events, saints, and the life of Christ was distributed to the participants.

The Prelate was then invited to deliver his remarks. The Prelate commended the organizers and participants, stressing the significance and usefulness of such seminars, and offered his guidance and encouragement for all to continue their service, to live a God-pleasing life, to do good and spread goodness.

The participants also had the opportunity to voice their concerns and exchange thoughts and ideas based on their individual experiences.

The seminar concluded at 5:00 p.m. with prayer and a group photo.

At 6:00 p.m., the directors and teachers participated in Divine Liturgy which takes place at the Prelacy "St. Dertad and St. Ashkhen Chapel" on a monthly basis. Rev. Fr. Nareg Pehlivanian celebrated Divine Liturgy.
